

րեսցի ընդ իս՝ և այլ սոցին նման բանք, և Գրիգոր Պատրիարք ողջունեալ զնա մեկնեցաւ անտի:

Եւ յետ կատարելոյ զՊատեքն Տեառն եւ ուղեւորելոյ զուխտաւորս՝ մեկնեցաւ Մէլեթիոս Պատրիարք յերուսաղէմէ (Յուլիս 5): Եւ ՚ի հասանիլ նորա յաւանն Ռեմէ՝ հարցին ցնա ժողովուրդ տեղւոյն զպատճառս այսպիսի աճապարանօք ուղեւորութեան նորին: Եւ նա ասէ՝ Հայք այսպէս արարին մեզ յայսմ ամի, երթամ ՚ի Բիւզանդիոն առնուլ ՚ի ձեռաց Հայոց զվանս Ս. Յակոբայ, եւ զնաց զճանապարհ իւր:

Եւ Փոխանորդ նորին Կեսարիոս եգիս Հեօճէթ ինչ հին, գրեալ ՚ի թուին Հիճրէթի ԿՊԿ, իբրու թէ Հայք յետ գրաւելոյ զվանս Ս. Յակոբայ ՚ի ձեռաց Յունաց, պայմանս եղեալ են տալ Յունաց ամ յամէ 200 ոսկիս: Եւ ՚ի դէսլ ժամանակի ՚ի հարցանել ցնա Գրիգորի Պատրիարքի, եւ նա ժպտելով ասէ՝ միթէ նո՞ր կամիս լսել զայդ, և նա լուռ եկաց: Նա զի տեղեկացեալ էր Գրիգոր ՚ի նոցին իսկ գործակալաց զգաղտնի մեքենայս զոր պատրաստէին ընդդէմ Հայոց, ուստի գրեալ ազգ արար առ Յովհաննէս Պատրիարք զգուշանալ ՚ի նոցին դաւաճանութենէ, և արթնութեամբ չտալ տեղի խռովութեան: Իբրեւ ետես Փոխանորդն Յունաց թէ՛ յայտնի եղեն ՚ի քաղաքին դաղտնիք իւրեանց՝ եկն առ Գրիգոր եւ ասէ, ընդէ՞ր ամիոխեալ էք՝ և զի՞նչ լուեալ էք զմէնջ, և թէ՛ գրեալ է Պատրիարքն մեր թէ Հայք գրթեցին ուխտին իւրեանց, զոր եղին յերուսաղէմ երգուեալ յԱւետարանն. զի ՚ի հասանիլ Պատրիարքին մերոյ ՚ի Կոստանդինուպօլիս, և ՚ի գնալն առ նա Յովհաննէս Պատրիարքի՝ հարցեալ է նմա թէ՛ ընդէ՞ր այսպէս արարեր, եւ նորա ասացեալ է թէ՛ ունիմք իրաւունս առնլոյ: Ասէ ցնա Գրիգոր՝ յորժամ զերդումն զայն արարաք, ո՞չ ապաքէն պայման եղաւ ՚ի միջի թէ աստ և թէ ՚ի Բիւզանդիոն մի՛ եւս յիշել զայն երկու խնդիր մեր և ձեր ասել, այսինքն երեք հետեւակ ազգքն՝ և ՚ի Գերեզման մտանելն, միթէ ե՞ս եղէ ուխտադրութ, և զի՞նչ պարտ էր ասել Յովհաննէս Պատրիարքի՝ ահա դարձեալ ՚ի ձէնջ եւ հրդեհ խռովութեան. և զինի այսոցիկ բանից՝ ասէ Կեսարիոս, գրեեսցուք ՚ի Կոստանդի-